Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1037-11.07.2016-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով.

«8. Սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11.3-րդ կետով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում անձանց՝ ոստիկանության կոչում շնորհելու մասին հրամանը ճանաչվում է ուժը կորցրած:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «18-ից» բառից հետո լրացնել «(բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության դիմորդների)» բառերը,

բ. 2-րդ կետը «անձնական հատկանիշներով» բառերից առաջ լրացնել «կրթությամբ,» բառով,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայության անցնելու համար կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»,

3) 3-րդ մասը «ներկայացվող» բառից հետո լրացնել «մասնագիտական,» բառով:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունից հանել «և քննչական գլխավոր վարչության պետին» բառերը և երկրորդ նախադասությունը,

2) 5-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն մասի պահանջները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակելու դեպքերի վրա:»:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել ոստիկանության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումը առնվազն 3 տարի զբաղեցրել է ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն և ունի ոստիկանության փոխգնդապետից ոչ ցածր ոստիկանության կոչում:»,

2) 3-րդ մասում՝

ա. առաջին պարբերությունից հանել «ունեն «Ոստիկանության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն,» բառերը,

բ. երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առանց սույն մասով նախատեսված պաշտոնի նշանակելու պայմանների, ոստիկանության մասնագիտացված հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ ոստիկանության գլխավոր կամ ավագ խմբերի պաշտոններում կարող է նշանակվել ծառայողական գերազանց ցուցանիշներ ունեցող և անձնական (բարոյական) բարձր որակներով բնութագրվող ոստիկանության այն ծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն երեք տարի զբաղեցրել է ոստիկանության միջին խմբի պաշտոն: Մասնագիտացված հանձնաժողովի եզրակացությամբ պաշտոնի նշանակվելուց հետո ծառայողի վերապատրաստումը պարտադիր է: Մասնագիտացված հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով:»,

գ. չորրորդ պարբերությունում ««Ոստիկանության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն» բառերը փոխարինել «բարձրագույն կրթություն» բառերով,

3) 6-րդ և 7-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ոստիկանության միջին խմբի պաշտոններում կարող են նշանակվել ոստիկանական միջին մասնագիտական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձինք հետևյալ առաջնահերթությամբ՝

1) ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում բարձրագույն կամ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստացած ծառայողները,

2) ոստիկանության ուսումնական հաստատությունում վճարովի հիմունքներով բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիները,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիները:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար, բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում կրթություն ստացածների, ոստիկանության միջին խմբի պաշտոններում նշանակելուց հետո, սահմանվում է վեցամսյա փորձաշրջան: Փորձաշրջանում գտնվող ոստիկանության ծառայողի՝ տվյալ պաշտոնին համապատասխանությունը ստուգվում է ոստիկանության ուսումնական հաստատությունում եռամսյա վերապատրաստման արդյունքներով և ուղղակի ղեկավարի դրական բնութագրի հիման վրա: Բնութագիրը պետք է պարունակի նվազագույն տեղեկություններ փորձաշրջանում գտնված անձի տրամաբանելու, քաղաքացիների, գործընկեր ծառայողների հետ շփվելու որակների, ծառայողական լիազորությունների իմացության և դրանք կիրառելու կարողության, ծառայողական կարգապահության վերաբերյալ: Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանվում է պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով:»:

4) 8-րդ մասում ««Ոստիկան» որակավորմամբ մասնագիտական կրթություն» բառերը փոխարինել «ոստիկանական նախնական մասնագիտական կրթություն» բառերով:

Հոդված 5. Օրենքի 14.1. հոդվածի 1-ին և 3-րդ մասերից հանել «միջին,» բառը:

Հոդված 6. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 մասով.

«1.1. Ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում կրթություն ստացող սովորողներն ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:»:

Հոդված 7. Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերության «դրամական բավարարում» բառերը փոխարինել «աշխատավարձ» բառով, իսկ երկրորդ պարբերության «դրամական բավարարումը» բառերը՝ «աշխատավարձը» բառով:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 11-րդ կետի երկրորդ պարբերության «տարածքային կառավարման նախարարության Հայաստանի» բառերը փոխարինել «արտակարգ իրավիճակների նախարարության» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11.3-րդ կետ.

«11.3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի արդյունքներով.»:

Հոդված 9. Օրենքի 54-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ մասով.

«7. Պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով ոստիկանության ուսումնական հաստատությունում կարող են սահմանվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոններ, որոնցում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով նշանակվում են համապատասխան գիտական աստիճան (կոչում) ունեցող, սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջները բավարարող, սակայն ոստիկանությունում ծառայության չանցնող անձինք՝ տվյալ պաշտոնում ոստիկանության ծառայողի համար նախատեսված համարժեք վարձատրությամբ: Սույն մասով նախատեսված դեպքերում վարձատրության համարժեքությունը որոշելու համար անհրաժեշտ ծառայության ստաժի և գիտամանկավարժական աշխատանքի ստաժի համապատասխանությունը որոշվում է ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները սահմանող՝ պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով:»:

Հոդված 10. Օրենքի 55-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ոստիկանության ուսումնական հաստատությունում «Իրավագիտության բակալավր» մասնագիտական որակավորում կարող են ստանալ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստանալուց հետո ոստիկանությունում ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ ունեցող ոստիկանության ծառայողները:»,

2) 6-րդ մասից հանել ««Ոստիկանության մագիստրոս» կամ» և ««Ոստիկանության բակալավր» կամ» բառերը:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի՝

1) 4-րդ հոդվածի 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 2-ից,

2) 4-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 2-ից,

3) 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 2016թ. դեկտեմբերի 13-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	*Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը*	*Եզրակացություն*
ՀՀ կառավարություն	Հոդված 7	Առաջարկվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում «դրամական բավարարում» բառերը փոխարինել «աշխատավարձ» բառով՝ հաշվի առնելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 7-րդ հոդվածով:
	Հոդված 9	Հաշվի առնելով ոստիկանության ուսումնական հաստատության ուսումնական գործընթացում փորձառու գիտնականներին ներգրավելու և պրոֆեսորադասախոսական անձնակազմն առավել որակյալ կադրերով համալրելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է օրենքում նախատեսել դրույթ, որի համաձայն ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոններում, բացի ոստիկանության ծառայողներից, հնարավորություն կընձեռվի համարժեք վարձատրությամբ նշանակելու նաև համապատասխան գիտական կոչում ունեցող և օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող՝ ոստիկանության ծառայող չհանդիսացող անձանց:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 9-րդ հոդվածով: